# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍ ԳՅՈՒՂԻ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

## ՊՈԱԿ-ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**2023-2028թթ**

# Զարգացման ծրագրի բովանդակություն

**1.**Ուսումնական հաստատության գործունեություն………………………………………………………………..................... 3

1.1 Կրթական կարիքների նկարագրությունը՝ պետության կրթական քաղաքականության միտումների, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան ……………………………………………………………………………………3

1.2 Կրթական կարիքների նկարագրություն՝ հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան ……..… 5

**2.**Առաքելություն……………………………………………………………………………………………………..………7

**3.** Իրավիճակի վերլուծություն

3.1Դպրոցի շենքային պայմաններըվերլուծություն………………………………………………………………..……. 15

3.2. Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծություն……………………………………………………………..… 15

3.3 Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն………………………………………………………………….23

3.4Դպրոցի համագործակցությունը ՏԻ մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպություններիհետ՝……………………………………..……….… 27

3.5Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում…………………………….……….. 40

3.6Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծություն ներկայացում……..47

3.7,Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն...........................................50

3.8Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն……………………………………59

3.9Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն…………..…62

3.10Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից ........................................................................................................65

3.11Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր……………………………………………………..70

3.12Դպրոցի խորհրդակցական մարմինները……………………………………………………………………..…..74

3.13 Աշակերտական համակազմ…………………………………………………………………………………………79

3.14Ուսումնական միջավայրը……………………………………………………………………………………………..83

**4.**Ակնկալվող արդյունքները ………………………………………………………..……………………………………… 90

**5**. Ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը ………………………………………………………… 92

**6**. Եզրափակում…………………………………………………………………………………………………………107

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան

# 1.ՈՒսումնական հաստատության գործունեությունը

## 1.1 Կրթական կարիքների նկարագրությունը՝ պետության կրթական քաղաքականության միտումների, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է,որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:
Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը:
Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:
Կրթության բարեփոխումները ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և ժամանակ:Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է: Կրթությունը ժողովրդավարության անկյունաքարն է, և այն մեծ դեր ունի հասարակությունների և պետությունների ամրապնդման, մարդկանց կենսապայմանների բարելավման և աշխարհի երկրների կայուն զարգացման ապահովման գործում:
Ծրագրի իրատեսականությունն ու շարունակականությունը ապահովելու նպատակով ես կարևորում եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս հիմնասյուները, որոնք համարվում են կրթության վերափոխման հիմնարար սկզբունքները:

Դրանքեն՝

- Սովորել իմանալու համար:
- Սովորել իրականացնելու համար:

- Սովորել լինելու համար:
- Սովորել միասին ապրելու համար:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ Դպրոց/ զարգացման 2023-2028 թվականների զարգացման ծրագրը մշակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան : Հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման պահանջները:

Դպրոցի զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են՝

1. Դպրոցի ներքին գործունեության 2018-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
2. Դպրոցում առկա հիմնախնդիրները

Դպրոցի զարգացման ծրագրի իրավական հիմքերն են՝

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքը
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
3. «Երեխաների իրավունքների մասին»ՀՀ օրենքը
4. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան»
5. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
6. Կրթակարգ
7. «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը
8. «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրը»

Ծրագրի հիմնամեխը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը,ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական ինքնազարգացման ներուժը:

Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:
ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանում է «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝

ա/դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,

բ/ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,

գ/ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ծրագրի մշակման համար կատարված են հետևյալ հաջորդական քայլերը՝

ա/սահմանվել է դպրոցի առաքելությունը,

բ/ վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել են եղած հիմնախնդիրները,

գ/սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,

դ/սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները, ժամանակացույցը

ե/սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել առկա և անհրաժեշտ մարդկային և նյութական միջոցները:

Կրթական ծրագրերը իրականացվում են նաև համայնքի կարիքներին համապատասխան: Ծնողական համայնքը, սովորողները նախանձախնդիր են և գնահատում են կրթօջախի իրականացրած կրթական ծրագրերի որակը, առաջընթաց նախաձեռնությունները և ըստ այդմ ձևակերպում են իրենց առաջարկությունները, ակտիվորեն մասնակցում են տարբեր նախագծերի քննարկումներին և աջակցում են դրանց իրականացմանը:

ՈՒսումնական գործընթացը արդյունավետ իրականացնելու համար դպրոցը շարունակաբար կատարում է կրթական կարիքների գնահատում յուրաքանչյուր սովորողի համար , որովհետև սովորողը ինչ-որ պահի կարող է ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:Դրա համար դպրոցն ունի մանկավարժական փորձառու համակազմ, ուսուցչի օգնականներ և 2023-2024 ուստարում նաև հոգեբան: Դպրոցը պատրաստակամ է իրականացնել համապատասխան աշխատանքներ կրթական միջավայրի բարելավման / շենքային պայմաններ և այլն/ ուղղությամբ:

## 1.2Կրթական կարիքների նկարագրություն՝ հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի նկարագրությունը

Դպրոցն իրականացնում է եռաստիճան կրթական ծրագիր հետևյալ սահմանային տեղերով

Տարրական ընդհանուր-169սահմանայինտեղով
Հիմնական ընդհանուր-238սահմանայինտեղով
Ավագ ընդհանուր-106 սահմանայինտեղով

Վարչական աշխատողներ՝
Տնօրեն
Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ

Մանկավարժական համակազմ
Մանկավարժներ- 37

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ-1
Ուսուցչի օգնական-3
Լաբորանտ-2
ՆԶՊ ուսուցիչ-1

ՈՒսումնաօժանդակ անձնակազմ

Գրադարանավար-1
Օպերատոր-2
Հնոցապան-4
Պահակ -4
Հավաքարար-3
Հաշվապահ-1

Դպրոցում գործում են 7 առարկայական մասնախմբեր
Կառավարման խորհուրդ՝ կազմված է 9 անձից
Մանկավարժական խորհուրդ՝ 45 անձ
Ծնողական խորհուրդ՝ 15 անձ
Աշակերտական խորհուրդ՝ 8 անձ
Հաստատության ենթակա կառուցվածքների հնարավորությունները և ներկա վիճակը
*Ջրամատակարարում - օրական 7-8 ժամ, բավարար
*Կոյուղացում - հորային, բավարար
*Էլեկտրամատակարարում- շուրջօրյա, լավ
*Գազամատակարարում -ջեռուցման սեզոնին, լավ
*Ջեռուցում-անհատական կաթսայատան միջոցով,լավ
*Սանհանգույցներ գործող - 3 , բավարար
*Ինտերնետային կապ- անհատական կրիչի, վայֆայի լարերի միջոցով, բավարար
*Ուսումնական նպատակով ֆիզիկական հարմարեցումներ
*Գրադարան-1՝ ավելիքան 4200 կտոր գրականությամբ, լավ
*Կաթսայատուն-1՝ կառուցված 2007 թ.-ին, լավ
*Մարզադահլիճ-1, բավարար
*Թանգարան-1, լավ
*Լաբորատորիա-3 /ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա/-բավարար
*Հանդիսությունների դահլիճ-1, բավարար
*Պահակակետ-1, լավ

*Առարկայական դասասենյակ- 5/ՆԶՊ,Շախմատ,«Արմաթ»ինժեներական լաբորատորիա, ՏՀՏ և «Տեխնոլոգիա»/ , բավարար
*Մարզահրապարակ-1, բավարար
*Ճաշարան -1, վերանորոգված
*Բուժկետ-1, բավարար
*Բուֆետ-1, բավարար
*Արհեստանոց-1, բավարար
Դպրոցի ենթակառուցվածքների վիճակի բարելավումը տնօրինության ամենօրյա աշխատանքի բաղադրիչներից է:

## 2. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի առաքելությունը իր սովորողների համար ազգային հենքի վրա հիմնական որակյալ կրթություն ապահովելն է՝ նպաստելով համակողմանիորեն զարգացած,հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորմանը:Ժամանակակից աշխարհում հանրակրթության ոլորտում կարևոր են դառնում ստեղծագործելու ունակությունը, քննադատական մտածելակերպը,թիմային աշխատանքը,բարդ խնդիրներին հնարավոր լուծումներ տալը:

21-րդ դարի կոմպետենտ (կարողունակ) քաղաքացին պետք է խորը գիտելիքներով, զարգացած կարողունակություններով, մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, սոցիումին ինտեգրված, նպատակասլաց ու հայրենասեր լինի:

Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը՝ կատարելագործվում՝ մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:
Ժամանակակից դպրոցից պահանջվում է.
1. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:

2. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:

3. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը,

որ սովորողը կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:

3. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի: Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:

5. Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար,

6. Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակություն:

7. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողունակություններ:

8. Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի հեղինակության շարունակական բարձրացումը,բարեփոխումների նկատմամբն դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ուժերի նկատմամբ վստահությունը այս հնգամյակում դպրոցի առաքելության բաղկացուցիչներից մեկն եմ համարում , քանիոր և՛ հասարակական գիտակցության, և ՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը,շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք, և սոցիալ- տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Վճռորոշ եմ համարում դպրոցում առկա, ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, ընթացիկ վերապատրաստումները, հզոր ներուժով երիտասարդ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում:
Այս և նմանատիպ այլառաքելությունների իրականացման ճանապարհին կարևոր է կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: Արդի դարաշրջանը պահանջում է արմատական փոփոխություններ կրթականոլորտում: Իսկ այդ փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում: Շատ կարևոր է սահուն կերպով անցնել ուսուցման «Հիբրդ» մեթոդին, որը հնարավորություն է տալիս կարծրացած ավանդականը դարձնել առավել հետաքրքիր՝ միաձուլելով հեռավար ուսուցման հետ:
Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.
ա/ապահովելու որակյալ կրթություն
բ/բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը
գ/կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետականն միջազգային միտումներին:
ՀՀ հանրակրթության մասինօրենքը սահմանում է.
«Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող,հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է,որը նպատակաուղղված է երեխայի,սովորողի, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը,մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության

նախապատրաստմանը»:
Կրթությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար անհատական նշանակություն ունի,ուստի մշտապես նոր գաղափարների անհրաժեշտություն է առաջանում:
Կրթական համակարգում որակական բարձր մակարդակը կարող էերաշխավորվել դպրոցի առաքելությունից բխող նպատակներով:
*ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
*ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ
*ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ
*ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել առնվազն երկու կարևոր խնդիր:
Առաջին՝
Արդյունավետ օգտագործել ժամանակը, մարդկային ռեսուրսը և նյութական միջոցները:
Երկրորդ՝
Ստեղծել և արդյունավետ օգտագործել աշխատանքի առավել նպաստավոր պայմաններ:
/ Կրթական համակարգում նպատակների իրականացումը երաշխավորվում է ռազմավարական պլանավորմամբ/

- Կարճ ժամանակահատվածում հասնել կրթության որակի էական բարելավմանը
- Բարենպաստ ուսումնական միջավայրի և անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում, ձեռքբերում և զարգացում:
- կրթության որակի էական բարելավման համար կազմակերպչական համապատասխան պայմանների և նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի առկայություն:
- Դպրոցի ներքին կարգապահական կառուցվածքի պահանջների իրականացում և կառավարման ու գործադիր մարմինների սերտ համագործակցություն:
- Ըստ լիազորությունների՝ աջակցություն ուսուցիչների որակավորման գործընթացին: Դպրոցում դասավանդող ուսուցիչների վերապատրաստումներ,մասնակցություն կամավոր ատեստավորման, նոր մեթոդների ինտեգրում, դասի ստեղծագործական ձևերի,միջոցների կիրառում:
- Տարբեր առարկաների դասաժամերին օգտագործվող ուսումնադիտողական պարագաների, պաստառների,սխեմաների ձեռքբերում և ըստ թեմաների դասակարգում:
- Երեխաների ֆիզիկական դաստիարակությունն հնարավորինս լավ կազմակերպելու համար՝փնտրել և գտնել միջոցներ մարզագույքով կահավորելու համար:
- Մանկավարժների մասնագիտական իրազեկության զարգացումն

ապահովելու նպատակով դպրոցում ստեղծել «Ուսումնական որակի» հանձնաժողով:

## 2.1Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- Համակողմանիորեն զարգացած,
- Մասնագիտորեն կողմնորոշված,
- Ազգայինարժեքներ կրող,
- Հայրենասեր,
- Գլոբալիզացիայի մարտահրավերների նպատրաստ,
- Աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- Մարդասիրության ոգով դաստիարակված

կոմպետենտ քաղաքացիներ:

Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթականկարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

## 2.2.Ի՞նչ ռեսուրսներ են առկաառաքելության իրագործման համար

1.Դպրոցի կրթական գործընթացի զարգացում պետության կրթական քաղաքականության միտումներին համահունչ:

2.Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ:

3.Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար:

4.Սովորողի կրթական կարիքի գնահատում:

5.Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ:

6.Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված , և՛կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

7.Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային:

8.Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ:

9.Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ:

10.Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի վաճումների նկատմամբ:

Մարդկային ռեսուրսներ

- Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում

Նյութատեխնիկական

- Համակարգչային տեխնիկայի համալրում
- Ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական ստեղծում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում

## 2.3Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականները

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- մանկավարժական համակազմի փորձառության ավելացում՝ սեմինարներ,վեբինարներ,վերապատրաստումներ ,
- Մասնակցային և համագործակցային միջավայր
- Համընդհանուրներառական կրթության իրականացումը,
- Կրթության որակի բարելավման համար պլանավորված աշխատանքների կազմկերպում և վերահսկում
- Կրթական միջավայրի շարունակական բարելավումը,
- Դպրոցի ակտիվներ գրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը(ճանաչողականայցեր,մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ,բանավեճեր,քննարկումներևայլն),
- Դպրոցում ձևավորված ավանդույթների շարունակում և փոխանցում սերունդներին,
- Խրախուսման միջոցները («Տարվա աշակերտ»,«Տարվա ուսուցիչ» անվանակարգերը, շնորհակալագրեր՝ դպրոցը լավագույնս ներկայացնելու համար, շնորհակալագրեր հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար),
- Սովորողների մասնակցությունը և հանրապետական, միջազգային և այլ մրցույթներին:

## 2.4 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են՝

| Դրական | Բացասական |
| --- | --- |
| • Առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք,կառավարման, ղեկավարման մարմիններ,համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ակտիվ ներգրավումը<br>• մարդկային, նյութական, ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը | • Կրթական գործընթացի մասնակիցների մոտիվացիայի ցածր լինելը և պատասխանատվության ոչ բավարար լինելը<br>• վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը |

Թվարկված ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- Բոլոր հնարավոր ռիսկերի կանխատեսում և գնահատում,
- Ռիսկերի կառավարման գործողությունների ճիշտ պլանավորում,
- Գործողությունների համակարգված իրականացում:

## 2.5Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են՝

**Դրական**

- Պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը:
- Երկրի տնտեսական աճով պայմանավորված՝ կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը:
- Համայնքի կրթության որակի Բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը:
- Լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը:
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը:

**Բացասական**

- Համաճարակներով պայմանավորված սահմանափակումները
- հասարակության մեջ դպրոցի նկատմամբձևավորվածկարծ րատիպերը

## 3.Իրավիճակի վերլուծություն, հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմեր

### ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

1.Դպրոցը հանդիսանում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 70.210.00888 վկայականի համարը 03Ա-055197, ծածկագիր 10007948):

2. Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի պաշտոնական կայքը՝, ֆեյսբուքյան էջը https://www.facebook.com/profile.php?id=100057550356940, https://noratus1.schoolsite.am/,noratus1@schools.am

3. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 25.10.2017 թվականին, գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից:

4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղՆորատուս ,Խ.Աբովյան-6, հեռախոս 093-24-94-00:

5. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:

6. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

### ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցը հիմնվել է 1969 թվականին՝ որպես միջնակարգ դպրոց:
Շենքը տիպային է, նախագծային հզորությունը՝964աշակերտ –տեղ:
2006 թվականին դպրոցը մասամբ վերանորոգվել է պետական բյուջեի միջոցների հաշվին:
Առկա դպրոցը բաղկացած է 2 մասնաշենքից և կից կառույցից:
Մասնաշենքերը եռահարկ և երկհարկ են: Մասնակի բարեկարգվել է բակը՝ մի հատվածը ասֆալտապատվել է,փոփոխվել են դպրոցի տարածքի ցանկապատները: Հիմնվել է Նորատուս գյուղի պատմության թանգարան: Վերանորոգվել է ճաշարանը և համալրվել է սպասքով , գույքով և սարքավորումներով: Խմելու ջրի և կոյուղու անցկացումից հետո շահագործվում են սանհանգույցները և ճաշարանը: Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: Բոլոր դասասենյակները կահավորված են բավականին լավ վիճակում գտնվող, բայց օգտագործված գույքով:
Դպրոցում՝

- Դասարանների թիվը 2022-2023 ուստարում-15

- Դպրոցն իրականացնում է կրթական ծրագրերը՝ 513 ոաշակերտ տեղ հզորությամբ
- 2022-2023 ուստարում սովորողներիթիվը-327
- Տարրական ընդհանուր-169սահմանայինտեղով
- Հիմնական ընդհանուր-238սահմանայինտեղով
- Ավագ ընդհանուր-106 սահմանայինտեղով

Դպրոցում աշխատող 44 մանկավարժներից 41-ը ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում: Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են միջնակարգ դպրոցում դասավանդելու չափանիշներին, ուսուցիչների տարվում են աշխատանքներ կամավոր ատեստավորմանը մասնակցելու ուղղությամբ:

4 ուսուցիչ ունի որակավորման 1-ինաստիճանի տարակարգ:
1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը և վաստակել 30% հավելավճարի իրավունք:
Ուսուցչի միջին դրույքաչափը 126470 ՀՀդրամ է:
Կառավարման խորհուրդը կազմված է 9 անձից:

Մանկավարժական խորհուրդ՝ 45 անձ
Ծնողական խորհուրդ՝ 15անձ
Աշակերտական խորհուրդ՝ 8 անձ

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցն ունի՝

1-գրադարան՝ավելի քան 4200 կտոր գրականությամբ
1-կաթսայատուն
1 -մարզադահլիճ
1- թանգարան
3-լաբորատորիա/ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա/
1-հանդիսությունների դահլիճ
1-պահակակետ

Առարկայական 5 դասասենյակ-ՆԶՊ,Շախմատ,«Արմաթ» ինժեներական լաբորատորիա, ՏՀՏ և «Տեխնոլոգիա» կաբինետներ

1- մարզահրապարակ
3 - սանհանգույց
1 -ճաշարան՝վերանորոգված
1-բուժկետ
1-արհեստանոց

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

## 3.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցամերձ տարածքի ընդարձակություն, դասասենյակների մեծություն և լուսավորվածություն<br>• Վերանորոգված 2 մասնաշենք, շենքային մեծ մակերես ,դպրոցամերձ ընդարձակ տարածք<br>• Կաթսայատան առկայություն<br>• Տանիքն ամբողջությամբ վերանորոգված է<br>• Դպրոցի ճանապարհամերձ տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>• Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են մաքրման և պահպանողական միջոցառումներ<br>• Արհեստանոցի առկայություն<br>• Ընդարձակ մարզահրապարակ<br>• Դպրոցի ճաշարանը լավ վիճակում է, առկա է տաք և սառը ջուր, կոյուղի,սեղանների, աթոռների և սպասքի առկայությունը հնարավորություն է տալիս աշակերտների համար ապահովել բարձրակարգ սպասարկում:<br>• Դպրոցում առկա են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ, ՆԶՊ-ի, «Շախմատ» առարկայի համար նախատեսված հարմարավետ դասասենյակներ:<br>• Հանդիսությունների դահլիճի առկայություն, բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում:<br>• «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի և | • Ապաստարանի բացակայություն<br>• Բացօթյա սպորտհրապարակի անմխիթար վիճակ<br>• Դպրոցի հետնամասի ցանկապատի անմխիթար վիճակ<br>• Դպրոցի շենքային պայմանները չեն համապատասխանում ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը<br>• 2-րդ մասնաշենքի եվրոպատուհանների բացակայություն<br>• Դպրոցի շենքի առանձին հատվածներում կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն: |

| | |
|---|---|
| համակարգչային դասասենյակի առկայություն<br>• Դպրոցն ապահովված է հակահրդեհային անվտանգության լրակազմով:<br>• Ուսումնական հաստատությունում առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլանը<br>• Բուժկետի դեղորայքը մշտական թարմացվում է<br>• Դպրոցում գործում են սանհանգույցներ<br>• Լուսավոր, ընդաձակ ֆիզկուլտ դահլիճի առկայություն | |

**Նպատակը՝**

1.Բարելավել դպոցի շենքային պայմանները և համապատասխանեցնելԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը :

**Խնդիրը՝**

**1.**Ստեղծել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայր :

**Գործողություններ և հնարավորություններ**

- Համագործակցել դպրոցի կառավարման խորհրդի հետ՝դոնոր կազմակերպությունների և հովանավորների ներգրավման համար:
- Դիմել ծնողական խորհրդին ցանկապատի վերանորոգման աշխատանքներ կազմակերպելու համար:
- Դիմել վարչատնտեսական համակարգողին 2-րդ մասնաշենքի եվրոպատուհանների տեղադրման համար:

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատաս խանատո ւ** | **Ժամանա կացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 2-րդ մասնաշենքի եվրոպատուհանների բացակայություն | Տնօրեն, վարչատն տեսական համակար գող | 2024-2026 | Դրամաշնորհային ծրագրեր,պետակ ան բյուջե, դպրոցի բյուջե,հովանավոր ներ | Ապահովել շենքային բարեկարգ միջավայր |
| Ապաստարանի բացակայություն | Տնօրեն, վարչատն տեսական համակար գող | 2023-2028 | Դրամաշնորհային ծրագրեր,պետակ ան բյուջե, հովանավորներ | Ապահովել անվտանգ միջավայր |
| Բացօթյա սպորտհրապարակի բարեկարգում | Տնօրեն, վարչատն տեսական համակար գող | 2024-2025 | Պետական բյուջե, դպրոցի բյուջե, հովանավորներ | Կրթական և սպորտային միջավայրի բարելավում |
| Դպրոցի հետնամասի ցանկապատի վերանորոգում | Տնօրեն, վարչատն տեսական համակար գող, ծնողական խորհուրդ | 2024-2026 | Պետական բյուջե,արտաբյուջ ետային միջոցներ, հովանավորներ | Կրթական միջավայրի անվտանգ պայմաննե ստեղծում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դպրոցի շենքային պայմանների հարմարեցում ԿԱՊԿՈՒ սովորողներին | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2025 | Պետական բյուջե,արտաբյուջետային միջոցներ, հովանավորներ | Կրթական միջավայրի բարելավում և հարմարավետ պայմանների ստեղծում |

**Ռիսկերը**
1.Ֆինանսական միջոցների պակաս:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**
1.Օգտագործել ծնողական համայնքի հնարավորությունները՝ արտաբյուջետային միջոցներ գտնելու համար:

**Հաշվետվություն**
Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ծնողական խորհուրդ / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

## 3.2 ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Ամբողջական լոկալ ջեռուցում<br>• Դպրոցն ունի գործող գրադարան՝ հագեցած ուսումնաօժանդակ գրականությամբ<br>• Գրադարանից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը, գրադարանը պարբերաբար համալրվում է նոր տպագրվող գեղարվեստական գրականության գրքերով<br>• Դպրոցում առկա են բուժկետ, համակարգչային կաբինետ, ՆԶՊ դասասենյակ և զինանոց, մարզադահլիճ, հանդիսությունների | • Դասասենյակների համալրում նոր գույքով<br>• Համակարգչային լսարանի կահավորանքի և նոր սերնդի տեխնիկայի բացակայություն<br>• Դպրոցի հանդիսությունների դահլիճի վարագույրների և երաժշտական սարքավորումների բացակայություն<br>• Նոր մարզագույքի բացակայություն<br>• Ֆիզիկայի,քիմիայի, կենսաբանության լաբորատորիաների համար |

| | |
|---|---|
| դահլիճ, ճաշարան, հաշվապահի, փոխտնօրենների առանձնասենյակներ տնօրենի կաբինետ, ուսուցչանոց, տեխնոլոգիայի կաբինետ, կաթսայատուն, սանհանգույցներ, բուֆետ, շախմատի դասասենյակ | ժամանակակից ուսումնական նյութերի և սարքավորումների բացակայություն<br>• Գրադարանին կից ընթերցասրահի բացակայություն<br>• Դիդակտիկ նյութերի ուսուցողական պաստառների, զննական պարագաների, երկրաչափական մարմինների մոդելների ձեռքբերման անհրաժեշտություն:<br>• Դասասենյակներում համակարգչային տեխնիկայի և ինտերնետ կապի բացակայություն |

**Նպատակը՝**
1.Բարելավել,հարստացնել,արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարձրացմանը:
**Խնդիրը՝**
1.Ձեռք բերել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացնող , նյութատեխնիկական բազայի համալրող միջոցներ:
**Գործողություններ և հնարավորություններ**

- Վարչատնտեսական համակարգողի հետ պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկա-կան պարագաների ձեռքբերումը՝ ելնելով դպրոցի ֆինանսական հնարավորություններից :

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատասխանատու** | **Ժամանակացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Դասասենյակների համալրում նոր գույքով | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023- 2024 | Դրամաշնորհայինծ րագրեր,պետական բյուջե, դպրոցի բյուջե | Ապահովել հարմարավետ միջավայր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Համակարգչային լսարանի կահավորում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023 -2024 | Պետական բյուջե, դպրոցի բյուջե | Կրթական միջավայրի բարելավում |
| Դպրոցի հանդիսությունների դահլիճի հարդարում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | մինչև 2024թ.-ի դեկտեմբեր | Պետական բյուջե, դպրոցի բյուջե | Միջոցառումներ ի պատշաճ կազմակերպում |
| Ֆիզիկայի,քիմիայի, կենսաբանության լաբորատորիաների համար ուսումնական նյութերի և սարքավորումների ձեռքբերում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2026 | Պետական բյուջե,դպրոցի բյուջե,արտաբյուջե տային միջոցներ, հովանավորներ | Կրթական միջավայրի բարելավում և նախագծային, հետազոտական աշխատանքներ ի խթանում |
| Մարզագույքի համալրում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2024-2026 | Պետական բյուջե,դպրոցի բյուջե,արտաբյուջե տային միջոցներ, հովանավորներ | Սպորտային առօրյայի աշխուժացում |
| Կահավորել ժամանակակից գրադարան/նաև առցանց/ և ընթերցասրահ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2023-2025 | Պետական բյուջե,արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական միջոցներ | Կրթական միջավայրի բարելավումև արտադասարանային ընթերցանության խթանում |

**Ռիսկերը**
1.Ֆինանսական միջոցների պակաս:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

1.Հովանավորների և դոնոր կազմակերպությունների ներգրավում:
2.Համագործակցություն համայնքի հետ:

**Հաշվետվություն**
Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել

հաշվետվություն՝ տնօրեն, վարչատնտեսական համակարգող / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

## 3.3 Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է, որի լիազորությունները սահմանվում են օրենքով և կանոնադրությամբ:Խորհուրդը բաղկացած 9 անդամից:Խորհուրդի գործունեությունը նպատակաուղղված է դպրոցի առաջընթացին: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում,

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ:Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Դպրոցի կառավարման խորհուրդը օրենքով նախատեսված պարբերակա-նությամբ հրավիրում է նիստեր, քննարկում դպրոցի խնդիրները, իր լիազորու-թյունների շրջանակներում և կատարում է առաջարկություններ և յուրաքանչյուր նիստից հետո 3-օրյա ժամկետում արձանագրությունը տեղադրվում է դպրոցի պաշտոնական կայքէջում:

Տնօրենը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին , ներկայացնում է դպրոցի խնդիրները, ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամա-նակացույցը, խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը, խորհրդի քննարկ-

մանն է ներկայացնում ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետ- վությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները:
Խորհուրդը սերտորեն համագործակցում է մանկավարժական, ծնողական,աշակերտական խորհուրդների ,առարկայական մեթոդական միավորումների հետ: Խորհուրդը ունի իր կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը:
Կանոնադրությամբ սահմանվում է գործունեության ոլորտները և կարգը:
Կառավարման խորհրդի նիստերից անդամների հաճախակի բացակայություն, իրենց գործառույթների հստակ իրականացման պասիվություն:
Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, որը կանոնավոր գումարում է նիստեր և կազմակերպում աշխատանքները, քննարկում առաջարկությունները և իր լիազորությունների շրջանակներում կայացնում որոշումներ:<br>• Խորհուրդը արդյունավետ համագործակցում է տնօրենի և դպրոցի խորհրդակցական մարմինների հետ | • Կառավարման խորհրդի նիստերից անդամների հաճախակի բացակայություն<br>• Խորհուրդի անդամների՝ իրենց լիազորությունների կատարման պասիվություն: |

**Նպատակը՝**
1.Սերտացնել կառավարման խորհրդի և դպրոցի համագործակցությունը:
**Խնդիրը՝**
1.Բարձրացնել խորհրդի անդամների իրենց գործառույթների իրականացման արդյունավետությունը:

2.Խորհրդի միջոցով առաջարկություններ ներկայացնել պետակա կառավարման լիազոր մարմնին՝ դպրոցի նյութատեխնիկական բազայի և կրթական միջավայրի բարելավման համար:

3.Օգտագործել կառավարման խորհրդի անդամների հնարավորությունները տարբեր

ծրագրերի մեջ ընդգրկվելու համար:

**Գործողություններ և հնարավորություններ**

- Անցկացնել քննարկումներ՝կառավարման մարմնի և տնօրենի գործառույթների պարզաբանման և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- Հաշվի առնել կառավարման խորհրդի հնարավորությունները և նրանց միջոցով մասնակցել տարբեր ծրագրերի:

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատասխանատու** | **Ժամանակացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման խորհրդի և տնօրենի միջև: | Տնօրեն, կառավարման խորհուրդ | 2023-2028 | | Կառավարման խորհրդի և դպրոցի արդյունավետ համագործակցություն |

**Ռիսկերը**

1.Կառավարման խորհրդի անդամների զբաղվածությունը:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

1.Հնարավորություն ստեղծել կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը նիստերին՝նաև հեռավար հարթակներից օգտվելու միջոցով:

**Հաշվետվություն**

Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրեն, կառավարման խորհուրդ / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:


Դպրոցխորհուրդ
Տնօրեն
Տնօրենի տեղակալներ
Գլխավոր հաշվապահ
Խորհրդակցական մարմին
Ուսումնական աշխատանքի գծով
ՄԿԱգծ
ԴԱԿ
Մանկ Խորհ.
ՄՄ
ԱԽ
ԾԽ
Տեխնիկական աշխատողներ
Հայոց լեզու և գրականութ.
ֆիզմաթ
Օտար լեզու (անգլերեն և ռուսերեն
Կենսաքիմիա
Պատմաաշխարհագրական
Ընդհանուր զարգացման առարկաներ
Տարրական կրթություն

## 3.4ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

### ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայտնի է, որ առողջ և ստեղծագործ համագործակցությունը նպաստում է արդյունավետ աշխատանքային գործունեությանը: Դպրոցը կարևորում է այս գործընթացը և ամեն ինչ անում՝վերջինիս ամրապնդելու և զարգացնելու համար՝ համոզված, որ այն դառնալու է միայն առաջընթացի գրավական:
Փաստենք, որ մեր դպրոցի հետ համագործակցության շրջանակները տարեցտարի ընդլայնվում են նպաստում նորարարական նախաձեռնությունների իրագործմանը: Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը / Համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ տոնակատարություններ, հանդիպումներ և այլն/: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ անցկացնե- լիս: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի զարգացմանը և կարիքների հետազոտմանը: Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է նաև մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Համայնքը պասիվ է սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում :

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Համայնքի հետ իրականացվում են համատեղ ծրագրեր՝սովորողների և ծնողների մասնակցությամբ Կազմակերպվում են շաբաթօրյակներ, ծառատունկեր, հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ<br>• Համայնքի ներկայացուցիչների և ծնողների մասնակցությամբ կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, տոնակատարություններ համերգներներ | • Սերտացնել դպրոցի և համայնքում գործող արվեստի դպրոցի կապը<br>• Համայնքի մասնակցությ ան |

| | |
|---|---|
| • Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝միտված համայնքի զարգացմանը և կարիքների հետազոտմանը: | բացակայությունը ուսումնանյութական բազայի հարստացման գործում<br>• Բավարար չէ սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում համայնքի մասնակցությունը |

**Նպատակը՝**

1. Հաստատության և տեղական ինքնակառավարման մարմինների կապի ամրապնդում:

2.Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում:

**Խնդիրը՝**

1.Տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ապահովել դպրոցի աշակերտների ներգրավածությունը սպորտային և մշակութային կենտրոններում :

2.Օգտագործել տեղական ինքնակառավարման մարմինների միջոցները դպրոցի նյութատեխ –նիկական բազան հարստացնելու համար :

**Գործողություններ և հնարավորություններ**

- Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դպրոցի աշակերտներին ըստ նախասիրությունների ընդգրկելու սպորտային և մշակութային խմբակներում:
- Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դպրոցի կարիքներից ելնելով նյութատեխնիկական բազայի հարստացման համար:

| Սահմանվածնպատակներինխ նդիրներիհամապատասխանգո րծողությունները | Պատասխան ատու | Ժամանակա ցույց | Հնարավոր ֆինանսական ծախսը | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Տեղական ինքնակառավարման մարմիններին հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ | Տնօրինությու ն, ՏԻՄ, դասղեկներ | 2023-2028 | | Տեղական ինքնակառավ արման մարմինների և դպրոցի արդյունավետ համագործակ ցություն |
| Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ ուսումնանյութական բազայի հարստացում | Տնօրինությու ն, ՏԻՄ | 2023-2028 | | Տեղական ինքնակառավ արման մարմինների և դպրոցի արդյունավետ համագործակ ցություն |
| Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և ծնողների մասնակցությամբ տարաբնույթ միջոցառումների կազմակերպում | Համայնք, տնօրեն, դասղեկներ, համակարգո ղ՝ կրթական աջակցությու նների և դաստիարակ չական աշխատանքն երի | 2023-2028 | | Տեղական ինքնակառավ արման մարմինների և դպրոցի արդյունավետ համագործակ ցություն |

**Ռիսկերը**
1.Տեղական ինքնակառավարման մարմինների միջոցների սահմանափակ լինելը:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**
1.Ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի համագործակցությունը՝ներգրավելով հնարավորությունները:

**Հաշվետվություն**
Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրինություն, դասղեկներ, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, համայնք / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

# ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Դպրոցը սերտորեն համագործակցում է ծնողական համայնքի հետ, որովհետև ծնողը երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակիցն է: Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Ծնողը երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործումդպրոցի առաջին համագործակիցն է: Մեծ է ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին:Ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով,անհատապես կամ խմբով, աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:Ծնողները համայնքային միջոցառումների կազմակերպման մասնակից են և համագործակցում են համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ:Նրանք հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով:Դպրոցում գործում է ծնողական խորհուրդ՝ 15 անդամներով: Նրանք ակտիվ գործունեություն են ցուցաբերում արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում: Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավումը մեր ամենօրյա աշխատանքի հիմքում է:

> Արդյունքում՝ամրապնդվում է ձեռքբերած փոխադարձ վստահությունը և հարգանքը, ծնող և դպրոց կապը: Ծնողը պետք է զգա,որ ինքը ունի հնարավորություն նպաստելու երեխաների կրթությանը իր իրավասությունների սահմաններում: Պետք է այնպես աշխատել,որ ծնողները շահագրգռված լինեն որակյալ կրթությամբ և այդ կրթության համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ:

Անհրաժեշտ է՝

1.Ծնողական խորհրդին ընդգրկել ուսմանական կարևորագույն գործառույթներում:

2.Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջներ ձևավորել:

3.Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը:

4.Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնազավառում: Այդ նպատակով ճշտել՝

- ✓ Դպրոց հաճախող աշակերտների թիվը ,որոնք հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում
- ✓ Երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը
- ✓ Միակողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը
- ✓ Զոհված ազատամարտիկների երեխաների թիվը
- ✓ Հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը
- ✓ Նյութապես անապահով սովորողների կազմը
- ✓ Ծնողական խնամքից զրկված աշակերտների թիվը
- ✓ Միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները
- ✓ Աշակերտների թիվը, որոնց ծնողները հաշմանդամ են
- ✓ Աշակերտների թիվը, որոնք դասերին չեն հաճախում վարձու աշխատանք իրականացնելու պատճառով
- ✓ Այն աշակերտների թիվը, որոնք անչափահասեն, սակայն ընդգրկված են որոշակի աշխատանքներում
- ✓ Աշակերտների թիվը,որոնց ծնողները գտնվում են արտերկրում

5.Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը,ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

6.Ծնողներին պետք է մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝այդ գործում ներգրավելով որպես հովանավորների:

7.Ծնողներիններ գրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, միջոցառումներին և այլն:

8.Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ: Այդ նպատակով դպրոցում ստեղծել ոչ ֆորմալ կրթության իրականացման համար դասասենյակ, որտեղ գեղեցիկձ նավորված անկյունում

տեղադրված կլինի երեխայի դաստիարակության և դպրոցին ու կյանքին նախապատրաստելու հանրամատչելի գրականություն, այդ բնագավառի ամենաթարմ նորություններն ու խորհուրդները: Բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարակության և նախնական ուսուցման նորություններին և հատուկ մանկավարժական մեթոդներին:Նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- Ծանոթացնել երեխայի խնդրին
- Միասին սահմանել խնդիրը
- Միասին գտնել խնդիրը լուծելու ուղիները
- Գնահատել սպասվող արդյունքները
- Ընտրել նկիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը
- Գնահատել փաստացի արդյունքները

Ծնողական համայնքը պասիվ է ուսմանական կարևորագույն գործառույթներում ներգրավածության, մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորման , ինչպես նաև դպրոցի կառավարման խորհրդի հետ համագործակցության հարցում :

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Ծնողական խորհուրդը պարբերաբար հրավիրում է նիստեր<br>• Համագործակցում է մանկավարժական խորհրդի հետ սովորողների ժամանցը, էքսկուրսիաները կազմակերպելու գործում<br>• Աջակցում է դպրոցում կազմակերպվող միջոցառումների անցկացմանը<br>• Ծնողական խորհուրդը աջակցում դպրոցին անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, երկկողմանի, միակողմանի | • Մանկավարժների և ծնողների ոչ բավարար հանագործակցություն երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորման |

| | |
|---|---|
| ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների,հաշմանդամ, սովորողների հետ տարվող աշխատանքներում:<br>• Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ<br>• Ծնողական խորհրդի ակտիվ ներգրավվածություն ունի արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում<br>• Ամենամյա եռակողմ նիստ, որտեղներկայացվում է հաստատությանուսումնադաստիա րակչականաշխատանքների հաշվետվություն,ակտիվ ուսուցիչները, ծնողները նաշակերտներնէլարժանանումեն Տնօրենի խրախուսանքին /պատվոգիր, շնորհակալագիր/:<br>• ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ,պասիվ ծնողներին ինտեգրելու ներգրավելու դպրոցական աշխատանքներում | համար<br>• Ծնողների մասնակցության բացակայություն ուսումնանյութակ ան բազայի հարստացման գործում<br>• Ծնողական խորհրդի աջակցությունըու սումնադաստիար ակչական աշխատանքների ն |

**Նպատակը՝**

1.Բարձրացնել ծնողական համայնքի դերը սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին արդյունավետ ներգրավելու համար:

**Խնդիրը՝**

1.Սերտացնել ծնողական համայնքի և դպրոցի կապը :

2.Ներգրավել ծնողական համայնքը հաստատության ուսումնանյութական բազայի հարստացմանը գործում :

**Գործողություններ և հնարավորություններ**

- Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը։
- Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման,դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով նրանց որպես հովանավորների։
| • Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ էլեկտրոնային, լրացվումեն սահմանված կարգերի համաձայն<br>• ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային | • Տարբեր օրենքների, իրավական ակտերի և կամ ծրագրերի փոփոխման հանդեպ ուսուցիչների պասիվություն<br>• Ուսուցիչների ոչ տեղյակ լինելը e-draft-ի կարևորությանը և նպատակին |

| | |
|---|---|
| առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան<br>• Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու նպատակով | |

**Նպատակը՝**

1. Ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ անելիս,նախագծերը քննարկելիս:

**Խնդիրը՝**

1. Ուսուցիչներին ներգրավել տարբեր հարցումների և կարծիքների հայտմանը:
2. Մասնակել e-draft-ում դրված նախագծերի քննարկմանը:

**Գործողություններ և հնարավորություններ**

- Պարբերբար տեղեկացնել ուսուցիչներին քննարկվող հարցերի մասին և ստանալ կարծիքներ:
- Ակտիվ մասնակցել e-draft-ում դրված նախագծերի քննարկմանը:

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատու | Ժամանակացույց | Հնարավոր ֆինանսական ծախսը | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իրավական ակտերի լուսաբանում e-draft. Am կայքի ներկայացում,հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում | Տնօրենություն փոխտնօրեններ, մեթոդմիավորման նախագահներ | 2023-2026 | | Ուսուցիչների տեղեկացվածության բարձրացում |
| Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ամբողջական անցում էլեկտրոնային փաթեթի | Տնօրենություն | 2023-2028 | | Համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին |
| Իրավական ակտերի լուսաբանում | Տնօրենություն | 2023-2028 | | Աշխատանքի թափանցիկության ապահովում |

**Ռիսկերը՝**

1.ՈՒսուցիչների պասիվությունը

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները՝**

1.ՈՒսուցիչների մասնակցության խթանում,մոտիվացիայի բարձրացում:

**Հաշվետվություն**

Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրեն, փոխտնօրեններ, մեթոդմիավորման նախագահներ / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

## 3.12Դպրոցի խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է խորհրդակցական մարմինների հետ, նրանց յուրաքանչյուրի աշխատանքը վերահսկվում է տնօրինության կողմից:Նրանց գործունեությունը բաց է և թափանցիկ:

**Դպրոցի մանկավարժական խորհուրդը**իր գործունեությունը իրականացրել է դպրոցի կանոնադրության պահանջներին համապատասխան: Մանկավարժական խորհուրդը առնվազը երկու ամիսը մեկ անգամ կազմակերպում է խորհրդի նիստեր, որտեղ կայացնում են քննարկումներ, ընդունում որոշումներ, հայտնում կարծիքներ, հավանության են արժանացնում իրականացվող նախաձեռնություններին:

**Առարկայական մեթոդական միավորումները** իր գործունեությունը իրականացրել է դպրոցի կանոնադրության պահանջներին համապատասխան: Առարկայական մեթոդական միավորումները առնվազը ամիսը մեկ անգամ կազմակերպում է նիստեր՝ մասնակցությամբ տնօրենի և տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի: Առարկայական մեթոդական միավորումներ նախագահները նիստերին ներկայացնում են յուրաքանչյուր ամսվա կատարած հաշվետվությունները՝ կատարողականները և ստանում հանձնարարականներ:

**Աշակերտական խորհուրդն** ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, որոնք վերաբերում են ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը , սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին:Կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր: Նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն ու կատարած աշխատանքը լուսաբանվում են դպրոցի ֆեյսբուքյան էջում: Աշակերտական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է դպրոցի խորհրդի ու մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտներին վերաբերող ուսումնական հարցերի արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքների կազմակերպմանը, աշակերտների կարգապահական հարցերի քննարկումներին, մասնակցում է համայնքային ծրագրերի իրականացմանը և առաջարկություններ ներկայացնում տնօրենությանը ներքին կարգապահության,հանգստի ու ժամանցի կազմակերպման,դպրոց-ընտանիք կապի ամրապնդման և այլ հարցերի վերաբերյալ:

Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Աշակերտական խորհուրդը դպրոցում քաղաքացիական կրթության կարևորագույն տարրերն են:Դրանք հնարավորություն են տալիս ստեղծելու ինքնավար աշակերտական մարմին և ակտիվորեն մասնակցելու դպրոցի ժողովրդավարական կառավարմանը, համայնքի կյանքին:Տնօրենության դերը մեծ է ԱԽ-ի կայացման հարցում: Կարևոր է նաև ԱԽ-ի

գործունեության ոլորտի ճշտումն ու աշակերտների կողմից իրենց իրավունքների գիտակցումը :

Աշակերտական խորհրդի հետ համագործակցության բարելավում

- Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը:Նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, որպեսզի աշակերտները կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը:
- ԱԽ հաշվետվությունները դարձնել կիսամյակային: Դրանք պետք է հանձնվեն ոչ միայն տնօրենին, այլ փակցվեն դպրոցի պատին և տեղադրվի դպրոցի ինտերնետային կայքում:
- Անցկացնել աշակերտական խորհուրդների տարեկան համագումարներ, փորձի փոխանակման ու նոր գաղափարների համար:
- Ավելի աշխուժացնել տարրական դասարանների երեխաների խնդիրներով զբաղվող ԱԽ անդամների աշխատանքը:

- Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում: Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:
- Աջակցել ԱԽ ծրագրերին և նախաձեռնություններին:

Այսպիսով ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:

**Ծնողական խորհուրդը** մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն<br>• Ամենամյաեռակողմ նիստ, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն,<br>• ԾԽևԱԽ ակտիվներ գրավվածություն արտադասարանական նարտադպրոցական միջոցառումներում<br>• ՄԽ և ՄՄ նպատակային և ակտիվ ներգրավածություն ուսդումնադաստիարակչական աշախատանքներում | • Համագործակցության,նախաձեռնության պասիվություն վերջին երկու տարում պայմանավորված համավարակով<br>• Ծնողական համայնքի կողմից կա նախաձեռնության պակաս<br>• Ուսուցիչների ծանրաբեռնվածության պատճառով ՄՄ աշխատանքների ոչ լիարժեք կատարում |

**Նպատակը՝**

1. Ակտիվացնել խորհրդակցական մարմինների գործունեությունը։
2. Ներգրավել ներդպրոցական և ուսումնադաստիարակչական աշխատանքներում։

**Խնդիրը՝**

1. Կազմակերպել քննարկումներ խորհրդակցական մարմիններում իրենց լիազորությունների և պարտականությունների վերաբերյալ։
2. Կազմակերպել և իրականացնել աշխատանքներ՝ ներգրավելով նրանց այդ աշխատանքներում։

**Գործողություններ և հնարավորություններ**

- Ըստ կարգի ԿԽ,ՄԽ,Մ/Մ,ԾԽ,ԱԽ, ժամանակին նիստեր անցկացնել, արձանագրել և վերահսկել որոշումների կատարմանը:
- Խրախուսել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև:
- Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողությունները:
- Կազմակերպել մասնագիտական, մանկավարժական, մեթոդական կատարելագործման աշխատանքներ:

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատասխանատու** | **Ժամանակացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| ԾԽ և ԱԽ կողմից ռազմահայրենասիրական,մշակութային, առողջ ապրելակերպի ու սպորտի զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպում | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, ուսուցիչներ, ծնողներ,աշակերտներ | 2023-2028 | | Հայրենասիրական ոգու բարձրացում, առողջ ապրելակերպի նսպորտի զարգացման խթանում |
| Համագործակցել ԾԽ անդամների հետ վարքի խնդիր ունեցող աշակերտների մասով: | Տնօրենություն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, մ/մ նախագահներ դասղեկներ | 2023-2028 | | Բարձրացնել վարքի խնդիրունեցողերեխաների հետ աշխատանքի արդյունավետությունը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հետևել ՄՄ աշխատանքների գործառույթների պատշաճ թափանցիկության ապահովմանը | Տնօրեն | 2023-2028 | | Դպրոցի գործունեության լուսաբանում |

**Ռիսկերը**

1.Մոտիվացիայի պակաս :

2.Շահագրգիռ կողմերի հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակասը:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

1.Խթանման միջոցների կիրառում:

2.Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում:

**Հաշվետվություն**

Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, մեթոդմիավորման նախագահներ, ուսուցիչներ, աշակերտներ, / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

## 3.13 Աշակերտական համակազմ

2022-2023 ուստարումդպրոցում սովորում է 329 աշակերտ: Նախորդ 2 տարիների համեմատ ավելացել է աշակերտ թիվը, այս ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է15դասարան, դպրոց էընդունվել44 աշակերտ:



Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական համակազմի աշխատանքը, այդ մասին են վկայում նաև ներքին գնահատման շրջանակներում արված հարցումները:
Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ, ցուցաբերում է անհատական մոտեցում բոլոր դաշտերում: Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, հաշվի է առնում նրանց նախասիրությունները:
Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր առարկայական մրցույթների («Մեղու», «Կենգուրու»), ստեղծագործական և սպորտային մրցույթների: Այդ ամենը լուսաբանվում է դպրոցի կայք էջերում:

Աշակերտները և ուսուցիչները մեկ միասնական համակարգ են, նրանց գործունեությունը՝փոխկապակցված:Ուստի մեր նպատակը պետք է լինի առաջին հերթին օգնել աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով օժտված լիարժեք անձ, ով իր արժեքային համակարգով ձգտում է ճանաչելու,համագործակցելու և ստեղծագործ մտքով արարելու:

- **Աշակերտներին** ընդունել ոչ միայն որպես մտավոր, այլև սոցիալական և հուզական(էմոցիոնալ)անհատականություններ՝ըստ որի հաշվի առնել.
  - Նախնական գիտելիքները
  - Մտավոր զարգացումը
  - Մշակութային դաստիարակություն
  - Զարգացվածությունը և զարգանալու հույսերը (սպասելիքները):

Սովորողների հաջողության հասնելու համար կարևոր ենք համարում հետևյալ հմտությունների ձևավորումն ու զարգացումը

- Ստեղծագործական մտածողությունը:
- Համագործակցությունը:
- Քննադատական մտածողությունը:
- Հաղորդակցությունը:
- Տեղեկատվական գրագիտությունը:
- Մեդիա գրագիտությունը:
- Տեխնիկական գրագիտությունը:
- Ճկունությունը:
- Լիդերությունը:
- Նախաձեռնողականությունը:
- Արդյունավետությունը:
- Սոցիալականությունը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ կարգով վերապահված գործառույթներին համապատասխան<br>• Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարություն, գործունեություն<br>• Մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ,<br>• Միջինից բարձր առաջադիմություն<br>• Մասնակցություն տեղծագործական և սպորտային մրցույթներին<br>• Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին<br>• Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը<br>• Ակտիվ մասնակցություն արտադասարանական միջոցառումներին | • Նախաձեռնողականության պակաս<br>• Մարզային, հանրապետական,միջազգային առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշը |

**Նպատակը՝**

**1.**Կոմպետենտ (կարողունակ) և նախաձեռնող ակտիվ քաղաքացիների ձևավորում:

**2.** Խթանել աշակերտների արդյունքների բարելավում օլիմպիադաներում:

**Խնդիրը՝**

1.Սովորողների մոտիվացիայի խթանում և ուսումնառության որակի բարելավում:

2.Աշակերտական ինքնավարության խթանում,արժեհամակարգի ձևավորում:

3.Օլիմպիադաների ակտիվ մասնակցություն:

**Գործողություններ և հնարավորություններ**

- Ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքի ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները:
- Օլիմպիադաների նախապատրաստում:

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատասխանատու** | **Ժամանակացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Մշտադիտարկումներ ,կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում | Տնօրեն, տնօրենի տեղակալ` ուսումնական աշխատանքի գծով,մեթոդմիավորման նախագահներ | 2023-2028 | | Կրթության որակի և առաջադիմության բարձրացում |
| Աշակերտական խորհրդի սենյակի ձևավորում աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին | Տնօրենություն,մանկավարժական համակազմ,վարչատնտեսական համակարգող | 2023-2028 | Դպրոցի բյուջե | Ապահովել բարեկարգ պայմաններ |
| Օլիմպիական խմբակների ստեղծում | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, համակարգող` կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների | 2023-2028 | | Օլիմպիադաներում հաջողությունների գրանցում |

**Ռիսկերը**

1.Աշակերտների մոտիվացիայի պակաս:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

1. Մոտիվացիայի բարձրացման քննարկումներ, տարբեր խրախուսման ձևերի կիրառում:

**Հաշվետվություն**

Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրեն, տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքի գծով, մեթոդմիավորման նախագահներ ,համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, մանկավարժական համակազմ, վարչատնտեսական համակարգող / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

## 3.14 Ուսումնական միջավայր

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների,գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ,սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ:Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը նաև դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և լրացուցիչ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի,դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Դպրոցում պետք էձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և քաղաքացիական հասարակության գաղափարներին:

Ուսումնական միջավայրի հիմքում պետք է դնել հումանիզմը, որը հետապնդում ու խթանում է մարդասիրության և լավատեսության արմատավորումը, խնդիրների դրական լուծումը, վստահությաններ շնչումը,մարդու մեջ բարձրացնում է պահանջկոտությունը ոչ միայն իր,այլև ուրիշների նկատմամբ:Դպրոցում չպետք է լինեն սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր: Երեխաները ինչպես նաև նրանց ծնողները պետք է համոզված լինեն , որ դպրոցում իրենք պաշտպանված են, դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Ուսումնական առողջ միջավայրի ստեղծմանան հրաժեշտ միջոցառումներնեն.

- Մանկավարժական կոլեկտիվում մշտապես ապահովել բարենպաստ

բարոյահոգեբանական մթնոլորտ:

- Օգտագործել բոլոր հնարավոր ռեսուրսները դպրոցում քաղպաշտպանության միջոցառումները պատշաճ կազմակերպելու համար:
- Ուսուցչին գնահատել ըստ նրա փորձառության,մասնագիտական և ստեղծագործական կարողությունների, ըստ արժանվույն սահմանել խրախուսման, պարգևատրման տարբեր ձևեր:

- Դպրոց ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդել երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումով:
- Ստեղծել նյութական և սոցիալ-հոգեբանական այնպիսի պայմաններ, որոնք սովորողի և ուսուցչի մոտ կառաջացնեն անընդհատ սովորելու, աշխատելու, ինքնաարտահայտվելու պահանջ:
- Մշտական հոգածության առարկա դարձնել սովորողների առողջության պահպանումը,խստորեն վերահսկել բացակայությունները, ճշտել դրանց պատճառները, պահպանել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոնները:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում դնել ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում շրջապատի մարդկանց, կարողանում է արժևորել հայ և համաշխարհային մշակույթը, գիտելիքը, ունի ազգային մտածողություն և ինքնագիտակցություն:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դասասենյակների կառուցվածքը, կահույքի ձևը և դասավորությունը համապատասխանում է Ժամանակի պահանջներին:<br>• Շենքային պայմանների, գույքի, անհրաժեշտ դասասենյակների, լուսավորության առումներով միջավայրը նպաստավոր է:<br>• Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական, գեղարվեստական գրքերով: | • Էլեկտրոնյայինգրատախտակների բացակայություն:<br>• ՆԶՊ առարկայի գործնական աշխատանքների կատարման նպատակով հրաձգարանի, խրամուղիների բացակայություն և միջոցների բացակայություն:<br>• Ֆիզկուլտուրայի դահլիճը ունի մարզագույքով համալրման կարիք: |

**Նպատակը՝**

1. Ֆիզկուլտուրայի դահլիճի գույքի համալրում:

2. Հրաձգրանի ստեղծում:

**Խնդիրը՝**

1.Ֆինանսական միջոցների հայթայթում:

2.Համայնքի և ծնողների ներգրավում:

3.Աշակերտների ներգրավում:

| **Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները** | **Պատասխանատու** | **Ժամանակացույց** | **Հնարավոր ֆինանսական ծախսը** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում. զինղեկի,քաղպաշտպանո ւթյան շտաբի պետի | Տնօրենություն, քաղպաշտպանության շտաբիպետ, վարչատնտեսական համակարգող | 2023-2025 | Պետական բյուջե | Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում և բարելավում |
| Առարկայական դասավանդման պայմանների բարելավում, | Տնօրենություն | 2023-2025 | Պետական բյուջե | Դասասենյակների անհրաժեշտ պայմանների ստեղծում |
| Ֆիզկուլտուրայի գույքի ձեռքբերում | Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող | 2023-2025 | Պետական բյուջե | Գույքով ապահոված մարզադահլիճ |

**Ռիսկերը**

1.Ոչ բավարարֆինանսական միջոցները:

**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

1.Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում՝ համապատասխան ծրագրերի իրականացում:

2.Համագործակցություն համայնքի հետ:

**Հաշվետվություն**

Սահմանված ժամանակացույցին և գործողություններին համապատասխան ներկայացնել հաշվետվություն՝ տնօրենություն, քաղպաշտպանության շտաբի պետ, վարչատնտեսական համակարգող / ըստ կազմված ձևաչափի, աղյուսակի և այլն/:

# ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերոնշյալխնդիրներըիրականացվելու ենհետևյալսկզբունքներով

- ժողովրդավարություն
- մարդասիրություն
- համագործակցություն
- համակարգվածություն
- ներդաշնակություն
- թափանցիկություն
- քաղաքացիականգիտակցություն
- ստեղծագործելուընդունակություն

## Դպրոցի զարգացման հիմնախնդիրները

I
աստիճանՏա
րրականդպր
ոց

II
ԱստիճանՀ
իմնականդ
պրոց

III
աստիճան
Ավագդպրո
ց

| Կրթականաստիճան | Խնդիրներ |
|---|---|
| Iաստիճան Տարրականդպրոց /6-9տարեկան/ I-IVդասարաննե րՁարգացող դպրոց | 1.Երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական և ինտելեկտուալ զարգացման մոնիթորինգ: 2.Տրամաբանական և աշխարհաճանաչողական ունակությունների զարգացման նպատակով հատուկ դասընթացների և արտադասարանական միջոցառումների կազմակերպում: 3.Ուսման հանդեպ դրական մոտեցումների ձևավորում և զարգացում: 4.Հետագա՝ միջնակարգ դպրոցում,կրթության համար անհրաժեշտ գիտելիքների,կարողունակությունների նիմտությունների ձեռքբերում, զարգացում: |
| IIաստիճան Հիմնականդպրոց /10-14տարեկան/V-IXդասարաննե րԻնքնորոշման դպրոց | 1.Տեսական մտածողության զարգացման հիմունքներ,հետազոտական գործունեության ձևավորում: 2.Աշակերտների անհատական զարգացման, նրանցհետագա մասնագիտական կողմնորոշման համարպայմաններիստեղծում: 3.Մշակութային շփումներ և դրանց զարգացման ու ձևավորման միջոցառումներ: 4.Արտադասարանական գործունեության զարգացման համար պայմանների բարելավում: 5.Անհատի բարոյական հիմունքների ձևավորում: 6.Առողջ ապրելակերպի հիմունքների ձևավորում: |
| IIIաստիճ անԱվագդ պրոց /15-17տարեկան/ X-XIIդասարաններ Ինքնահաստատմ անդպրոց | 1.Ավագ դպրոցում գիտահետազոտական գործունեություն ծավալելու կարողունակությունների մշակում: 2.Աշխարհ ընկալման և ազգային գաղափարախոսության ձևավորում: 3.Սոցիալական ակտիվ գործունեության հիմունքների ձևավորում, հասարակության մեջ իր տեղի, դերի կողմնորոշում: 4.Առողջ ապրելակերպի հիմունքների տիրապետում: |

## ԴՊՐՈՑԻ ՊԱՏԿԵՐԱՆԻՇ ԵՎ ՆՇԱՆԱԲԱՆ

Հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս հիմնասյուները՝

- Սովորել իմանալու համար
- Սովորել իրականացնելու համար
- Սովորել լինելու համար
- Սովորելմիասին ապրելու համար

Առաջարկում եմ մեր դպրոցի համար սահմանել հետևյալ նշանաբանը՝

**«ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»**

Առաջարկում եմ նաև ունենալ մեր դպրոցի ամբողջական անվանումն արտահայտող ինքնօրինակ ուրվագծով պատկերանիշ (լոգո), ինչպես նաև դրոշ:Այս հարցի շուրջ կազմակերպել աշակերտական խորհրդի և մանկավարժական խորհրդի լսումներ, հաշվի առնել առաջարկությունները:

# ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Զարգացման ծրագրում մեր կողմից նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- բոլոր սովորողներին կտրամադրվի հնարավորինս ժամանակակից և որակյալ կրթություն
- կընդլայնվեն աշակերտների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները
- կավելանա աշակերտների առողջության պահպանմանը նպաստող նախապայմանները
- աշխատանքները կկազմակերպվեն նյութատեխնիկական նորացված բազայի հիման վրա
- կբարելավվեն ուսուցիչների և դասղեկների մասնագիտական և նախաձեռնողական որակները
- կձևավորվի շրջանավարտների խորհուրդ, կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի կառավարման խորհրդում
- կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը

Ակնկալվում է, որ թվարկված բոլոր արդյունքները վերջնահաշվում կնպաստեն դպրոցի վարկանիշային ցուցանիշի աճին՝ խթանելով դեպի դպրոց աշակերտների առավել մեծ ներհոսքը:

Հրապուրիչ և որակյալ կրթականմիջավայր

Վերանորոգված նյութատեխնիկակա նբազայովհագեցած առաջադեմդպրոց

Փորձառու և ճանաչվածմասնագետներ, նորարար նստեղծագործուսուցիչներ

Սոցիալ-մշակութայինկենտրոն հանդիսացողդպրոց

Ժողովրդավարականսկզբու նքներին համապատասխան ԱԽ և ԾԽգործունեություն

ՏՀՏ միջոցներիլիարժե ք ներդնումև կիրառումդասապ րոցեսում

Աշակերտների թվիավելացում

Սովորողների բարձրցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում

Ապագա մասնագիտությանճիշտ կողմնորոշում ևընտրություն

21-րդդարիկարողունակկիրթունակ քաղաքացի

## ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը (ԿԽ):

Յուրաքանչյուր կիսամյակի և տարվա համար պատասխանատուների կողմից ներկայացվելու են հաշվետվություններ, որոնք հիմնված են լինելու վերոնշյալ գործողությունների ստորև բերվող արդյունքների և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի կատարողականի վրա: Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքներ բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

| | Ոլորտը | Միավոր % |
|---|---|---|
| 1 | Դպրոցի շենքային պայմաններ | 5 % |
| | **Նպատակ 1.** Բարելավել դպոցի շենքային պայմանները և համապատասխանեցնելԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը: | |
| | **Խնդիր 1.** Ստեղծել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայր : | |
| | **Գործողություն 1.** Համագործակցել դպրոցի կառավարման խորհրդի հետ՝դոնոր կազմակերպությունների և հովանավորների ներգրավման համար: | |
| | **Գործողություն 2.** Դիմել ծնողական խորհրդին ցանկապատի վերանորոգման աշխատանքներ կազմակերպելու համար | |
| | **Գործողություն 3.** Դիմել վարչատնտեսական համակարգողին 2-րդ մասնաշենքի եվրոպատուհանների տեղադրման համար: | |
| 2 | Դպրոցի նյութատեխնիկական բազա | 5 % |
| | **Նպատակ 2.** Բարելավել,հարստացնել,արդիականացնել | |

| | | |
|---|---|---|
| | նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարձրացմանը: | |
| | **Խնդիր 1.** Ձեռք բերել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացնող , նյութատեխնիկական բազայի համալրող միջոցներ: | |
| | **Գործողություն 1.** Վարչատնտեսական համակարգողի հետ պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաների ձեռքբերումը՝ ելնելով դպրոցի ֆինանսական հնարավորություններից : | |
| 3 | **Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն** | 5 % |
| | **Նպատակ 3.** Սերտացնել կառավարման խորհրդի և դպրոցի համագործակցությունը: | |
| | **Խնդիր 1.** Բարձրացնել խորհրդի անդամների իրենց գործառույթների իրականացման արդյունավետությունը: | |
| | **Խնդիր 2.** Խորհրդի միջոցով առաջարկություններ ներկայացնել պետակա կառավարման լիազոր մարմնին՝ դպրոցի նյութատեխնիկական բազայի և կրթական միջավայրի բարելավման համար: | |
| | **Խնդիր 3.** Օգտագործել կառավարման խորհրդի անդամների հնարավորությունները տարբեր ծրագրերի մեջ ընդգրկվելու համար: | |
| | **Գործողություն 1.** Անցկացնել քննարկումներ՝կառավարման մարմնի և տնօրենի գործառույթների պարզաբանման և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: | |
| | **Գործողություն 2.** Հաշվի առնել կառավարման խորհրդի հնարավորությունները և նրանց միջոցով մասնակցել տարբեր ծրագրերի: | |
| 4 | **Դպրոցի համագործակցությունը տի մարմինների հետ:** | 5 % |
| | **Նպատակ 4.** Հաստատության և տեղական ինքնակառավարման մարմինների կապի ամրապնդում: | |
| | **Նպատակ 5.** Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: | |
| | **Խնդիր 1.** Տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ապահովել դպրոցի աշակերտների ներգրավածությունը սպորտային և մշակութային կենտրոններում : | |

| | | |
|---|---|---|
| | **Խնդիր 2.** Օգտագործել տեղական ինքնակառավարման մարմինների միջոցները դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար : | |
| | **Գործողություն 1.** Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դպրոցի աշակերտներին ըստ նախասիրությունների ընդգրկելու սպորտային և մշակութային խմբակներում: | |
| | **Գործողություն 2.** Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին դպրոցի կարիքներից ելնելով նյութատեխնիկական բազայի հարստացման համար: | |
| <u>5</u> | **Դպրոցի համագործակցությունը ծնողական համայնքի հետ:** | <u>5 %</u> |
| | **Նպատակ 6.** Բարձրացնել ծնողական համայնքի դերը սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին արդյունավետ ներգրավելու համար: | |
| | **Խնդիր 1.** Սերտացնել ծնողական համայնքի և դպրոցի կապը : | |
| | **Խնդիր 2.** Ներգրավել ծնողական համայնքը հաստատության ուսումնանյութական բազայի հարստացմանը գործում: | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը: | |
| | • **Գործողություն 2.** Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման,դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով նրանց որպես հովանավորների: | |

| | | |
|---|---|---|
| | **Գործողություն 3.** Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ: Այդ նպատակով դպրոցում ստեղծել ոչ ֆորմալ կրթության իրականացման համար դասասենյակ, որտեղ գեղեցիկ ձևավորված անկյունում տեղադրված կլինի երեխայի դաստիարակության և դպրոցին ուկյանքին նախապատրաստելու հանրամատչելի գրականություն, այդ բնագավառի ամենաթարմ նորություններն ու խորհուրդները:Նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները՝<br>• Ծանոթացնել երեխայի խնդրին<br>• Միասին սահմանել խնդիրը<br>• Միասին գտնել խնդիրը լուծելու ուղիները<br>• Գնահատել սպասվող արդյունքները<br>• Ընտրել և կիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը<br>• Գնահատե<br>լ<br>փաստա<br>ի<br>արդյուն<br>քները | |
| 6 | **Դպրոցի համագործակցությունը կրթության կառավարման մարմիններիեվ շահառու կազմակերպությունների հետ:** | 5 % |
| | **Նպատակ 7.** Համագործակցություն միջազգային բուհերի հետ՝ մասնագիտական կողմնորոշման զարգացման համար: | |
| | **Խնդիր 1.** Կապեր հաստատել միջազգային բուհերի հետ: | |
| | **Խնդիր 2.** Կազմել համագործակցության ծրագրեր: | |
| | **Խնդիր 3.** Ներգրավել աշակերտների այդ բուհերում անցկացվող մրցույթներին, այդ թվում՝ հեռավար: | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումներ: | |
| | **Գործողություն 2.** Կնքել համագործակցության պայմանագրեր մասնագիտական կողմնորոշման զարգացման համար: | |
| 7 | **Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում:** | 10 % |
| | **Նպատակ 8.** Մանկավարժական համակազմի մասնագիտական | |

| | | |
|---|---|---|
| | և դասավանդման որակների արդիականացում և բարելավում՝ նպաստելու ուսուցման որակի բարձրացմանը: | |
| | **Խնդիր 1.** Սեմինարների կազմակերպում: | |
| | **Խնդիր 2.** Տարբեր խորհրդաժողովների մասնակցություն: | |
| | **Խնդիր 3.** Կամավոր ատեստավորման մասնակցության և որակավորման տարակարգ ստանալու գործընթացին աջակցում: | |
| | **Խնդիր 4.**Ատեստավորման ենթակա ուսուցիչների կարիքների վերհանում: | |
| | **Գործողություն 1.** Մանկավարժների մասնագիտական զարգացման կարիքները գնահատել՝ինքնագնահատման, տնօրինության,առարկայական մ/մ նախագահների դիտարկումների և դասալսումների միջոցով: | |
| | **Գործողություն 2.** Պլանավորել և իրականացնել մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացմանը միտված տարբեր ծրագրեր և միջոցառումներ: | |
| <u>8</u> | **Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծությունների կայացում:** | <u>5 %</u> |
| | **Նպատակ 9.** ՌԻսուցիրների մոտ ՏՀՏ ռեսուրսների օգտագործման և ստեղծման հմտությունների զարգացում: | |
| | **Խնդիր 1.** Ստեղծել ՏՀՏ միջոցներով կահավորված միջավայր : | |
| | **Խնդիր 2.** Դասընթացների, վերապատրաստումների միջոցով ուսուցիչների ՏՀՏ հմտությունների բարձրացում: | |
| | **Գործողություն 1.** Ժամանակակից գրականության ձեռքբերում | |
| | **Գործողություն 2.** Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ,քննարկումներ: | |
| <u>9</u> | **Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն:** | <u>15 %</u> |
| | **Նպատակ 10.** Նոր չափորոշիչների ներդրումը ուսումնական գործընթացում: | |
| | **Խնդիր 1.** Առարկայական ծրագրերի ներդնումը՝ ըստ նոր չափորոշիչների: | |
| | **Խնդիր 2.** Վերջնարդյունքների հիման վրա կրթության որակի բարելավում: | |
| | **Խնդիր 3.** Գնահատման համակարգի արդիականացում: | |

| | | |
|---|---|---|
| | **Գործողություն 1.** Ելնելով նոր չափորոշիչներից և առարկայական ծրագրերից՝ կազմել թեմատիկ պլաններ: | |
| | **Գործողություն 2.** Ամեն թեմայի համար դուրս բերել վերջնարդյունքները | |
| | **Գործողություն 3.** Մշակել գնահատման ձևերի ներդնումը ըստ չափորոշիչների: | |
| 10 | **Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն:** | 10 % |
| | **Նպատակ 11.** Սովորողների անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար պայմանների ստեղծում՝ հասարակական կյանքին ինտեգրման համար: | |
| | **Նպատակ 12.** ՌԻսուցիչների և վարչական աշխատողների միջև համագործակցային միջավայրի ստեղծում: | |
| | **Խնդիր 1** .Միջոցառումների միջոցով աշակերտների մոտ զարգացնել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքներ | |
| | **Խնդիր 2 .** Ստեղծել պայմաններ և խրախուսել ուսուցիչների համագործակցության և դպրոցի տարբեր գործընթացներում ընդգրկվելու համար: | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել տարբեր միջոցառումներ ՝ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքների վերաբերյալ: | |
| | **Գործողություն 2.** Առարկայական մեթոդական միավորումների , մանկավարժական խորհրդի , տնօրինության կողմից խրախուսել բազմակարծիք, ներառական միջավայրի ստեղծմանը: | |
| 11 | **Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:** | 5 % |
| | **Նպատակ 13.** Ուսուցիչների ինքնակրթության, մասնագիտական հմտությունների զարգացում: | |
| | **Խնդիր 1 .** Կազմակերպել սեմինարներ, քննարկումներ ինքնազարգացման կարևորությունը թեմայով: | |
| | **Խնդիր 2 .** Ներգրավել ուսուցիչներին տարբեր վերապատրաստումների: | |
| | **Խնդիր 3 .** Նախապատրաստել ուսուցիչներին՝ կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի գործընթացներին ընդգրկելու համար: | |
| | **Գործողություն 1.** Համագործակցել մենթոր դպրոցի հետ: | |
| | **Գործողություն 2.** Որոշել վերապատրաստումների ուղղությունները: | |
| | **Գործողություն 3.** Հրավիրել մասնագետ կամ առաջարկել ընտրել կազմակերպություն: | |
| | **Գործողություն 4.** Մշակել ուսուցիչների վերապատրաստման կայուն համակարգ՝ հիմնված պարտադիր և կամավոր ատեստավորման կարգերի, ինչպես նաև ուսուցիչների անհատական կրթական կարիքների | |

| | | |
|---|---|---|
| | վրա: | |
| 12 | **Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:** | 5 % |
| | **Նպատակ 14.** Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և պլանավորում: | |
| | **Նպատակ15.** Ֆինանսական այլընտրանքային միջոցների հայթայթում: | |
| | **Խնդիր 1 .** Տանել հետևողական աշխատանք՝ արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրեր իրականացնելու համար: | |
| | **Խնդիր 2 .** Մասնակցել կրթականծրագրերի, որոնք ապահովում են ֆինանսական արդյունք: | |
| | **Գործողություն 1.** Բյուջեի պլանավորում, նախագծի կազմում: | |
| | **Գործողություն 2.** Նյութական միջոցների կարիքի գնահատում: | |
| 13 | **Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր:** | 5 % |
| | **Նպատակ 16.** Ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ անելիս,նախագծերը քննարկելիս: | |
| | **Խնդիր 1.** Ուսուցիչներին ներգրավել տարբեր հարցումների և կարծիքների հայտմանը: | |
| | **Խնդիր 2.** Մասնակել e-draft-ում դրված նախագծերի քննարկմանը: | |
| | **Գործողություն 1.** Պարբերբար տեղեկացնել ուսուցիչների քննարկվող հարցերի մասին և ստանալա կարծիքներ: | |
| | **Գործողություն 2.** Ակտիվ մասնակցել e-draft-ում դրված նախագծերի քննարկմանը: | |
| 14 | **Դպրոցի խորհրդակցական մարմինները:** | 5 % |
| | **Նպատակ 17.** Ակտիվացնել խորհրդակցական մարմինների գործունեությունը: | |
| | **Նպատակ 18.** Ներգրավել ներդպրոցական և ուսումնադաստիարակչական աշխատանքներում: | |
| | **Խնդիր 1.** Կազմակերպել քննարկումներ խորհրդակցական մարմիններում իրենց լիազորությունների և պարտականությունների վերաբերյալ: | |
| | **Խնդիր 2.** Կազմակերպել և իրականացնել աշխատանքներ՝ ներգրավելով նրանց այդ աշխատանքներում: | |
| | **Գործողություն 1.** Ըստ կարգի ԿԽ,ՄԽ,Մ/Մ,ԾԽ,ԱԽ, ժամանակին նիստեր անցկացնել, արձանագրել և վերահսկել որոշումների կատարմանը: | |
| | **Գործողություն 2.** Խրախուսել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև: | |

| | | |
|---|---|---|
| | **Գործողություն 3.** Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողությունները: | |
| | **Գործողություն 4.** Կազմակերպել մասնագիտական, մանկավարժական, մեթոդական կատարելագործման աշխատանքներ: | |
| **15** | **Աշակերտական համակազմ** | **5 %** |
| | **Նպատակ 19.** Կոմպետենտ (կարողունակ) և նախաձեռնող ակտիվ քաղաքացիների ձևավորում: | |
| | **Նպատակ 20.** Խթանել աշակերտների արդյունքների բարելավում օլիմպիադաներում: | |
| | **Խնդիր 1.** Սովորողների մոտիվացիայի խթանում և ուսումնառության որակի բարելավում: | |
| | **Խնդիր 2.** Աշակերտական ինքնավարության խթանում,արժեհամակարգի ձևավորում: | |
| | **Խնդիր 3.** Օլիմպիադաների ակտիվ մասնակցություն: | |
| | **Գործողություն 1.** Ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքի ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները: | |
| | **Գործողություն 2.** Օլիմպիադաների նախապատրաստում: | |
| **16** | **Ուսումնական միջավայր** | **5 %** |
| | **Նպատակ 21.** Ֆիզկուլտուրայի դահլիճը գույքի համալրում: | |
| | **Նպատակ 22.** Հրաձգրանի ստեղծում: | |
| | **Խնդիր 1.** Ֆինանսական միջոցների հայթայթում: | |
| | **Խնդիր 2.** Համայնքի և ծնողների ներգրավում: | |
| | **Խնդիր 3.** Աշակերտների ներգրավում: | |
| | **Գործողություն 1.** Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում. | |
| | **Գործողություն 2.** Առարկայական դասավանդման պայմանների բարելավում: | |
| | **Ընդամենը** | **100 %** |

Յուրաքանչյուր նպատակի, խնդիրների և գործողության գնահատման համար սահմանել հետևյալ գնահատման ձևերը՝

| | **Գործողություններ** | Չի կատարվել **0 միավոր** | Մասամբ է կատարվել **0,5 միավոր** | Կատարվել է **1 միավոր** |
|---|---|---|---|---|
| 1 | **Դպրոցի շենքային պայմաններ** | | | |
| | **Գործողություն 1.** Համագործակցել դպրոցի կառավարման խորհրդի հետ՝դոնոր կազմակերպությունների և հովանավորների ներգրավման համար: | | | |
| | **Գործողություն 2.** Դիմել ծնողական խորհրդին ցանկապատի վերանորոգման աշխատանքներ կազմակերպելու համար | | | |
| | **Գործողություն 3.** Դիմել վարչատնտեսական համակարգողին 2-րդ մասնաշենքի եվրոպատուհանների տեղադրման համար: | | | |
| 2 | **Դպրոցի նյութատեխնիկական բազա** | | | |
| | **Գործողություն 1.** Վարչատնտեսական համակարգողի հետ պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաների ձեռքբերումը՝ ելնելով դպրոցի ֆինանսական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հնարավորություններից : | | | |
| 3 | **Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն** | | | |
| | **Գործողություն 1.** Անցկացնել քննարկումներ՝ կառավարման մարմնի և տնօրենի գործառույթների պարզաբանման և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: | | | |
| | **Գործողություն 2.** Հաշվի առնել կառավարման խորհրդի հնարավորությունները և նրանց միջոցով մասնակցել տարբեր ծրագրերի: | | | |
| 4 | **Դպրոցի համագործակցությունը տի մարմինների հետ:** | | | |
| | **Գործողություն 1.** Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դպրոցի աշակերտներին ըստ նախասիրությունների ընդգրկել սպորտային և մշակութային խմբակներում: | | | |
| | **Գործողություն 2.** Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դպրոցի կարիքներից ելնելով նյութատեխնիկական բազայի հարստացման համար: | | | |
| 5 | **Դպրոցի համագործակցությունը ծնողական համայնքի** | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հետ։ | | | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը։ | | | |
| | **Գործողություն 2.** Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման,դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական<br><br>**Գործողություն 3.** Ապահովել ծնողների ն տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ։ Այդ նպատակով դպրոցում ստեղծել ոչ ֆորմալ կրթության իրականացման համար դասասենյակ, որտեղ գեղեցիկ ձևավորված անկյունում տեղադրված կլինի երեխայի դաստիարակության և դպրոցին ուկյանքին | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նախապատրաստելու հանրամատչելի գրականություն, այդ բնագավառի ամենաթարմ նորություններն ու խորհուրդները:Նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները՝<br>• Ծանոթացնել երեխայի խնդրին<br>• Միասին սահմանել խնդիրը<br>• Միասին գտնել խնդիրը լուծելու ուղիները<br>• Գնահատել սպասվող արդյունքները<br>• Ընտրել և կիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը | | | |
| 6 | **Դպրոցի համագործակցությունը կրթության կառավարման մարմիններիեվ շահառու կազմակերպությունների հետ:** | | | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումներ: | | | |
| | **Գործողություն 2.** Կնքել համագործակցության պայմանագրեր մասնագիտական կողմնորոշման զարգացման համար: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | **Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում:** | | | |
| | **Գործողություն 1.** Մանկավարժների մասնագիտական զարգացման կարիքները գնահատել՝ինքնագնահատման, տնօրինության,առարկայական մ/մ նախագահների դիտարկումների և դասալսումների միջոցով: | | | |
| | **Գործողություն 2.** Պլանավորել և իրականացնել մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացմանը միտված տարբեր ծրագրեր և միջոցառումներ: | | | |
| 8 | **Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծությունների կայացում:** | | | |
| | **Գործողություն 1.** Ժամանակակից գրականության ձեռքբերում | | | |
| | **Գործողություն 2.** Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ,քննարկումներ: | | | |
| 9 | **Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն:** | | | |
| | **Գործողություն 1.** Ելնելով նոր չափորոշիչներից և առարկայական ծրագրերից կազմել թեմատիկ պլաններ: | | | |
| | **Գործողություն 2.** Ամեն թեմայի համար դուրս բերել | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերջնարդյունքները | | | |
| | **Գործողություն 3.** Մշակել գնահատման ձևերի ներդնումը ըստ չափորոշիչների: | | | |
| 10 | **Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն**: | | | |
| | **Գործողություն 1.** Կազմակերպել տարբեր միջոցառումներ՝ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքների վերաբերյալ: | | | |
| | **Գործողություն 2.** Առարկայական մեթոդական միավորումների, մանկավարժական խորհրդի, տնօրինության կողմից խրախուսել բազմակարծիք, ներառական միջավայրի ստեղծմանը: | | | |
| 11 | **Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:** | | | |
| | **Գործողություն 1.** Համագործակցել մենթոր դպրոցի հետ: | | | |
| | **Գործողություն 2.** Որոշել վերապատրաստումների ուղղությունները: | | | |
| | **Գործողություն 3.** Հրավիրել մասնագետ կամ առաջարկել ընտրել կազմակերպություն: | | | |
| | **Գործողություն 4.** Մշակել ուսուցիչների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերապատրաստման կայուն համակարգ՝ հիմնված պարտադիր և կամավոր ատեստավորման կարգերի, ինչպես նաև ուսուցիչների անհատական կրթական կարիքների վրա: | | | |
| 12 | **Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:** | | | |
| | **Գործողություն 1.** Բյուջեի պլանավորում նախագծի կազմում: | | | |
| | **Գործողություն 2.** Նյութական միջոցների կարիքի գնահատում: | | | |
| 13 | **Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր:** | | | |
| | **Գործողություն 1.** Պարբերբար տեղեկացնել ուսուցիչների քննարկվող հարցերի մասին և ստանալա կարծիքներ: | | | |
| | **Գործողություն 2.** Ակտիվ մասնակցել e-draft-ում դրված նախագծերի քննարկմանը: | | | |
| 14 | **Դպրոցի խորհրդակցական մարմինները:** | | | |
| | **Գործողություն 1.** Ըստ կարգի ԿԽ,ՄԽ,Մ/Մ,ԾԽ,ԱԽ, ժամանակին նիստեր անցկացնել, արձանագրել և վերահսկել որոշումների կատարմանը: | | | |
| | **Գործողություն 2.** Խրախուսել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև: | | | |
| | **Գործողություն 3.** Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողությունները: | | | |
| | **Գործողություն 4.** Կազմակերպել | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասնագիտական, մանկավարժական, մեթոդական կատարելագործման աշխատանքներ: | | | |
| <u>15</u> | **Աշակերտական համակազմ** | | | |
| | **Գործողություն 1.** Ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքի ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները: | | | |
| | **Գործողություն 2.** Օլիմպիադաների նախապատրաստում: | | | |
| <u>16</u> | **Ուսումնական միջավայր** | | | |
| | **Գործողություն 1.** Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում. | | | |
| | **Գործողություն 2.** Առարկայական դասավանդման պայմանների բարելավում: | | | |

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է 2018-2023 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը: Նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: